

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարազգայացիք դիմում են ուղղակի
Կիսաբարձրագրութիւնը և անոն լեզուով:

ՄԱՍԿ

Կարգադրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական վերջին անցքերը:— Եւրոպայի տե-
սուածքին: Նամակ խմբագրին: Նամակ խմբա-
գրին: Ներքին լուրեր:— Արտաքին տեսու-
թիւն: Թիֆլիս: Ֆրանսիա: Նամակ Պարսկաս-
տանից:— Վշակին Տեղադրներ:— Յայտարարու-
թիւններ:— Տեղեկացոյց:— Բանա սիրակաւն:
Կտակ պարտք:

ԲԱՂԱԲԱՍՆ ՎԵՐՁԻՆ ԱՆՅՔԵՐԸ

Եւրոպական թէ լրագիրների
և թէ քաղաքական շրջանների
ուշադրութիւնը ներկայ բողոքում
գարձարձ է կրուն Եւրոպայի վրա:
Եւրոպական առաջին միաստան
հրատարականը և նրա տեսու-
թիւնը իշխան Բիսմարկի հետ
Գաստէ յում բողոքի ուշադրու-
թիւնը գարձարձ են իրանց վրա:
Եվեքի համար հասկանալի է, որ
երկու պետական մարդիկների,
իշխան Բիսմարկի և կրուն Եւրո-
պայի տեսութիւնը, մի հասարակ,
բարեկամական այցելութիւն չէ,
այլ որ այդ տեսութեան ժամա-
նակ վճռվել են բաւական նշանա-
ւոր հարցեր, որոնք ունեն նշանա-
կութիւն Եւրոպայի միջազգային
դրութեան համար:

Երկու միաստանները տեսնվե-
ցան երկու կայսրների, Վիլհելմի

և Գրանց-Յոլսէփի, միմեանց
հետ ունեցած խօսակցութեանց
յետոյ: Միմաստանները Գաստէ յ-
նում խորհրդակցեցին այնպիսի մի
ժամանակ, երբ աւստրիական մայ-
րաքաղաքում հասարակում են այդ
երկրի բոլոր նշանաւոր պետական
մարդիկ, երբ պէտք է բացվի աւ-
ստրիական ըն յերաստը, երբ աւ-
ստրիական առաջին միաստանի յա-
ջորդը պէտք է նշանակվի, երբ
պէտք է որոշվի Եւստրիայի Արե-
ւելեան ապագայ քաղաքականու-
թիւնը, Եւրո-Ֆազար սանձակի
գրաւման ժամանակը և այլն:
Միւս կողմից լրագիրները ուշա-
դրութիւն են դարձնում այն հան-
գամանքի վրա, որ իշխան Բիսմարկի
կրուն Եւրոպայի հետ բանակցու-
թիւնը տեղի ունեցաւ նոյն իսկ այն
ժամանակ, երբ գերմանական պաշ-
տոնական լրագիրները սաստիկ
յարձակվում են ուսաց պետա-
կան կանցլէր, իշխան Գորչակովի
վրա:

Լրագիրների մեծ մասը ուրա-
խութեամբ նայում են Գերմա-
նիայի և Եւստրիայի միմեանց
մտենալու վրա, նորա այն կար-
ծիք են յայտնում, որ Եւրոպայի
խաղաղութիւնը հաստատ կը լի-
նի, եթէ երկու պետութիւններ,

Գերմանիա և Եւստրիա միմեանց
համարձակ կը լինեն: Եւստրիայի
և Գերմանիայի բարեկամութիւնը
և դաշնադրութիւնը ամենաբաւ-
միջոց է համարվում Ռուսաստա-
նի ազդեցութիւնը Եւրոպայի վրա
նուազացնելու համար:

Իշխան Բիսմարկ, ստում է
լրագիրներից մէկը, պէտք է վը-
ճարէր Գրանց-Գերմանական պա-
տերազմի ժամանակ Ռուսաստա-
նի պահած չէզօրութեան համար,
բայց այդ վճարը նա խոստումնը-
ներով էր հաստուցանում: Իշխան
Բիսմարկի այդպիսի վարմունքը
պէտք է սառեցնէր Ռուսաստանի
և Գերմանիայի յարաբերութիւնը:
Եթէ Գերմանիայի և Գրանցիայի
մէջ մի նոր պատերազմ ծագի
Ռուսաստանը առաջվայ պէս Գեր-
մանիային չէ օգնի: Այդ պատ-
ճառով իշխան Բիսմարկ բարեկա-
մական յարաբերութիւններ է
հաստատում Եւստրո-Ռուսարիայի
հետ, որպէս զի չէզօր պահի
Ռուսաստանին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՍՏԱԿ ԽՄԲԱԳԻՆ

Թիֆլիս, 23-ին օգոստոսի

Օգոստոսի 13-ին եղած ներկայացման համար,
որը բարեգործական նպատակով էր, հարկ եւ
համարում յարգելի հասարակութեան լրագրու-
թեամբ մի ընդհանուր հաշիւ ներկայացնել
Միասնական տոմսերի գումարն է—497 ռ. 10 կ.
Ռոմիտեռ այս ներկայացման համար մտաւո-
րապէս երկու ամիս է, որ խումբը պատրաստ-
վում էր, ուստի բաւականի ծախքեր են կարծ,
որոնք վրա աւելացնելով նա թատրոնի վարձը—
250 ռ., աֆիշաների տպագրութիւնը, օրերով, յու-
շարարի, ներկայացման օրը ծառայողների վար-
ձատրութիւնները և այն օրվայ ուրիշ մանր ծախ-
քերը, ընդհանուր ծախքի գումարը սնում է—
371 ռ. 40 կ. Միասնական յոգևորդի հանձնով,
մնում է զուտ գումար 125 ռ. 70 կոպէկ:
Այս գումարից 15 ռ. 40 կ. տու-
սակը տուած է եղել պ. Միլիթարիանցին,
որից, իրա տեսելով կորցրած է 8 ռ. տոմսակ:
Խումբը թէև տարա մասին կասկածում է, բայց
այնու ամենայնիւ ներում է իրա համաձայնութեամբ
կորցրած տոմսերի կէտը—4 ռ. և մնացած 11 ռ.
40 կ. ինդրում է շուտով հասցնել պ. Միլիթար-
իանցին, որ նա էլ հասցնի ուժ հարկն էս իսկ
պ. Միլիթարիանցի օգտի այն մասը, որը նա պի-
տի ստանար ինչպէս վարձ, նուիրում է մի և նոյն
բարեգործական նպատակին:

Մանրամասն հաշիւը ներկայացված է խմբի այն
անձինքներին, որոնք սկզբից ինձ օգնել են, թէ
գրամական միջոցով, թէ կրկնութիւններին յաճա-
խելով իսկ խմբի այն անձինքներին, որոնք միայն
վերջին մի քանի կրկնութիւններին էին ներկայ,
փոքր դեր ունենալու պատճառով և որոնք ներ-
կայացմանը մասնակցեցին այն պատճառով, որ
ես նոյն խմբից եմ, պարտք եմ համարում հրա-
պարակապէս յայտնել իմ շնորհակալութեան:

Խմբի բոլոր սկզբնական անձինքների համաձայ-
նութեամբ յանձնած եմ արդէն մնացած գումարը
—110 ռ. 30 կ. պ. Միլիթարիանցին և նա կը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Վրաժը գլխին, բըում էր դառնելը դէպի խոտա-
ւէտ արտաւարները: Ինչ մեծ տարբերութիւն
անցնալի և ներկայի մէջ. հովիտ կաօի և Բորայի
հերոս Միլիթարի մէջ:

Մի երեկոյ յայտնվեցաւ նրա մօտ Ստեփանը,
որ բերում էր իր հետ մի անպիսի կապ գրքերի-
նա դրեց սեղանի վրա իր ընտը և ընկաւ բազ-
կաթոռի մէջ: Պատանին սաստիկ յոգնած էր և
բնում, բայց նրա գունամաշի գէղը փայլում էր
ուրախութեամբ: Միլիթարը պատուեց նրան, թէ
ինչ պատասխան ստացաւ աղայից իր ուսման մա-
սին: 0000 թուական

—Ես ուրիշ կերպ չէի սպասում, պատասխանեց
Ստեփանը արձամարմանքով.—այդ ոչինչ, մօտ եկ,
քիչ ցոյց տամ, թէ ինչ գրքեր են դրանք:
—Միլիթարը մօտեցաւ գրասեղանին և աշակերտի
հետաքրքրութեամբ սկսեց նայել գրքերի վրա:
—Գրանցից, ցոյց էր տալիս Ստեփանը թերթե-
լով գրքը, դու կը ծանօթանաս ֆինանսական և
բանկային գործառնութեանց հետ. այդ միւսը քիչ
կը ծանօթացնէ դանազան տեսակ հում բերքերի
հետ, որ արդիւնաբերվում են այլ և այլ երկրնե-
րում. իսկ այդ երրորդից կը ծանօթանաս գործա-
տադրութեան հետ: Բայց այդ չորրորդը մի գե-
ղեցիկ վէպ է, կարդա, երբ կը ծանօթանաս ստա-
ջիներուց, դա կը կրթէ քո հոգին և ճշտակը:
Միլիթարը ուրախ-ուրախ վեր էր աւանում դեռ.
չը կարճով գրքերը, նայում էր, և կրկին դնում
գրասեղանի վրա:
—Մտաւայց տեղ քիչ, չարձանակեց Ստեփանը,
ես արդէն թոյլութիւն ստացայ քո մասին, որ
կրբե աղատ լսող, դու կարողանաս յաճախել այս

տեղի առևտրական դպրոցը, շաբաթը երկու ան-
գամ, ժամանակ կունենաս:

—Շաբաթը երկու անգամ, կրկինց Միլիթարը
մտածելով, ինչու չէ, ժամանակ կունենամ:

—Հաս դեղեցիկ, ուրեմն ես էզուց առաւօ-
տեան կը գամ, քիչ կը սանեմ և կը յանձնեմ
դպրոցի սեւեխին:

—Նա վերկայացաւ:

—Յետուութիւն, առաւօտեան ութ ժամին քիչ
մօտ կը լինեմ:

—Ո՛րք ես շտապում, մի փոքր սպասիւր, իսկոյն
թէ չկը ամիս, խնդրում էր Միլիթարը:

—Զիմ կարող, ինձ մի քանի տեղ ես պէտք է
անցնել:

—Նա հեռացաւ:

—Ո՛րքան բարի է նա, մտածում էր Միլիթարը

Ստեփանի հեռանալուց յետոյ,—բայց որքան

բարի է, այնքան էլ հպարտ է: Ես ձրի չը պի-
տի ընդունեմ նրա բարեբաւութիւնը, մեր երկրոսի

վիճակը շատ նման է միմեանց. նա փողի աղքատ

է, իսկ ես—կրթութեան: Պէտք է լրացնեք մէկս

միւսի կարողութիւնը. եթէ նա ինձանից ոչինչ

ծառայութիւն չի ընդունի, զբանով կը վրաւորե

ինձ, և առիթ կը տայ ինձ ես ընդունել այն հո-

գատարութիւնը, որ նա ունի իմ մասին: Բայց

ինչ կըանակալով օգնել...

—Վերջին հարցը Միլիթարը մտաւայութեան

մէջ ձգեց: Նա չէր ցանկանում անպիսի լինել,

եթէ ոչ, շատ հեշտ էր ամեն տարի մի չորս կամ

հինգ հարիւր ռուբլի տալ Ստեփանին և այնպէս

անցկացնել Մասիսեանի հաշիւների մէջ, որ նա ո-

չինչ չը հասկանար: Բայց կամենում էր իր սե-

տեղի առևտրական դպրոցը, շաբաթը երկու ան-
գամ, ժամանակ կունենաս:

—Շաբաթը երկու անգամ, կրկինց Միլիթարը
մտածելով, ինչու չէ, ժամանակ կունենամ:

—Հաս դեղեցիկ, ուրեմն ես էզուց առաւօ-
տեան կը գամ, քիչ կը սանեմ և կը յանձնեմ
դպրոցի սեւեխին:

—Նա վերկայացաւ:

—Յետուութիւն, առաւօտեան ութ ժամին քիչ
մօտ կը լինեմ:

—Ո՛րք ես շտապում, մի փոքր սպասիւր, իսկոյն
թէ չկը ամիս, խնդրում էր Միլիթարը:

—Զիմ կարող, ինձ մի քանի տեղ ես պէտք է
անցնել:

—Նա հեռացաւ:

—Ո՛րքան բարի է նա, մտածում էր Միլիթարը

Ստեփանի հեռանալուց յետոյ,—բայց որքան

բարի է, այնքան էլ հպարտ է: Ես ձրի չը պի-
տի ընդունեմ նրա բարեբաւութիւնը, մեր երկրոսի

վիճակը շատ նման է միմեանց. նա փողի աղքատ

է, իսկ ես—կրթութեան: Պէտք է լրացնեք մէկս

միւսի կարողութիւնը. եթէ նա ինձանից ոչինչ

ծառայութիւն չի ընդունի, զբանով կը վրաւորե

ինձ, և առիթ կը տայ ինձ ես ընդունել այն հո-

գատարութիւնը, որ նա ունի իմ մասին: Բայց

ինչ կըանակալով օգնել...

—Վերջին հարցը Միլիթարը մտաւայութեան

մէջ ձգեց: Նա չէր ցանկանում անպիսի լինել,

եթէ ոչ, շատ հեշտ էր ամեն տարի մի չորս կամ

հինգ հարիւր ռուբլի տալ Ստեփանին և այնպէս

անցկացնել Մասիսեանի հաշիւների մէջ, որ նա ո-

չինչ չը հասկանար: Բայց կամենում էր իր սե-

ուսման միջոցով, թէ կրկնութիւններին յաճա-
խելով իսկ խմբի այն անձինքներին, որոնք միայն
վերջին մի քանի կրկնութիւններին էին ներկայ,
փոքր դեր ունենալու պատճառով և որոնք ներ-
կայացմանը մասնակցեցին այն պատճառով, որ
ես նոյն խմբից եմ, պարտք եմ համարում հրա-
պարակապէս յայտնել իմ շնորհակալութեան:

Խմբի բոլոր սկզբնական անձինքների համաձայ-
նութեամբ յանձնած եմ արդէն մնացած գումարը
—110 ռ. 30 կ. պ. Միլիթարիանցին և նա կը

ուսման միջոցով, թէ կրկնութիւններին յաճա-
խելով իսկ խմբի այն անձինքներին, որոնք միայն
վերջին մի քանի կրկնութիւններին էին ներկայ,
փոքր դեր ունենալու պատճառով և որոնք ներ-
կայացմանը մասնակցեցին այն պատճառով, որ
ես նոյն խմբից եմ, պարտք եմ համարում հրա-
պարակապէս յայտնել իմ շնորհակալութեան:

Խմբի բոլոր սկզբնական անձինքների համաձայ-
նութեամբ յանձնած եմ արդէն մնացած գումարը
—110 ռ. 30 կ. պ. Միլիթարիանցին և նա կը

ուսման միջոցով, թէ կրկնութիւններին յաճա-
խելով իսկ խմբի այն անձինքներին, որոնք միայն
վերջին մի քանի կրկնութիւններին էին ներկայ,
փոքր դեր ունենալու պատճառով և որոնք ներ-
կայացմանը մասնակցեցին այն պատճառով, որ
ես նոյն խմբից եմ, պարտք եմ համարում հրա-
պարակապէս յայտնել իմ շնորհակալութեան:

հսկի պատանի Մկրտիչ Տէր-Շմառնեանի վրա, որը այժմ իրա ուսումը պիտի շարունակի Եւրոպական դպրոցումը: Պ. Միխայիլեանցին էլ կը խնդրեմ շուտով հասցնել իր վրա մնացած գումարը պ. Սաֆրազեանցին:

Կ. Խօջապարեանց

ՆԱՄԱԿ ԽՄԱՅԻՆ

Թիֆլիս, 24 օգոստոսի

Ի նկատի ունենալով լրագրական նշանակութիւնը և նորա բարոյական պարզը, որ անխոր դնում է ամեն մի մարդու վրա յարգանք վերաբերել զէպի մի հրապարակական պահանջ և ոչ լուր-թեամբ արհամարհել այն, թէ և լինի այն սխալ կամ խկապէս սուտ՝ եւ այս համետ նամակաւ պարտաւորուեմ եմ պատասխանել իմ մասին ձեր «Մշակ» լրագրի 138 համարի մէջ ներքին լուրերի շարքումը գրած յօդուածին: Արդարև Հրեշտակապետաց եկեղեցու երեցփոխան պ. Յ. Թամաշեանը մի օր ներկայանալով կոնսիստորիայի ստեղծուած ուր ներկայ էին բոլոր անդամակիցներս, խնդրում է թողտուութիւն եկեղեցական դուռերից ծախսե-200 ուրբի նորոգութեանց համար. բայց եւ համաձայնութեամբ միւս անդամաց բացատրում եմ նրան: Միթէ այս հանգամանքից կարելի է եզրակացնել, որ եւ նրան յայտնի կաշառք ակնարկած լինեմ: Քաղաքում շատ ատենական տեղիք կան, միթէ նրանք անխոր կատարում են իրենց դիմած բոլոր խնդրատուաց խնդիրները: Հարկաւ ոչ ուրեմն կարելի է հետևանքն թէ նրանք անուշտ կաշառք են պահանջում նրանցից, որոնց խնդիրներն բացատրում են: Եթէ այսպէս կարելի է կարծել՝ ապա եւ ես ինքս կարողարացնեմ պ. Թամաշեանցի բարեխիղճ դատողութիւնը և կը հնազանդեմ ընդունել այն ամեն նկրթական ու բարոյական պատիժները, որոնց կենտրոնը լինի զարգացնել բոլոր ատենական տեղիաց անդամները: Ես ամենայն ճշմարտութեամբ յայտնում եմ, որ իմ մտքս բնաւ այնպիսի բան չեմ անցուցած, որով պ. Թամաշեանը մեղանշում է արդարութեան դէմ: Չարմանում եմ ինչպէս մի մարդ այնքան մեղանշում է խիղճը և ցածացնում է մարդկութիւնը, որ իմ մտքէս չանցուցած բանը, նա ինձ վրա յանցանք դնելով քարոզում է: Իրանի, շատ դարմանում եմ պ. Թամաշեանցի վրա, որ անա երեք տարի է երեցփոխանի պաշտօն է կատարում և ոչ մի անգամ հաշիւ չէ տուած, որ ուրիշ անգամ ստացած է մի գումարի լուծումն, յետոյ ստացած է ժապաւնեան մատան սողովարարութեան եկեղեցու նորոգութեան ժողովուրդ, բայց նրանց տակաւին հաշիւները չը տուած՝ պահանջում է իրեն տալ լուծումն և նոր գումարի: Եւ երբ իրեն բացատրում է, նա ձեռնարկում է այնպիսի անտեղի զրպարտութեան: Պարտի այդ օրինակ

վարմունքից եւ ակամայ գալիս եմ այն եղբակցու-թեան, որ նա սովորած է կաշառք տալու և իմ ակնաչիւ է քաշում: Ես նորէն կրկնում եմ որ կաշառքի ակնկալութիւն չունեմ. կոնսիստորիան նրա խնդիրը չը կատարելու համար ունի և ուրիշ զօրաւոր պատճառ, որ այժմ իբրև խորհուրդ է պահում:

Մամբրէ վ. Սանասարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են ԱՍԱԿԱՍԿԻՑ որ օրե-րումս հին հողաբարձուների տեղ կընտրվեն նորե-րը: Թղթակիցը ասում է: «Շախկին հողաբարձու-ներից միայն միքո համապատասխանում էր իր նշանակութեանը: Յանկալի է, որ նոր հողաբար-ձուները ընտրված լինեն ոչ թէ հին և փոսած մարդկանցից և ոչ սառնարիւն, անտարբեր պա-րոններից, այլ այնպիսի անձերից, որոնք աշխա-տելին ուսումնարանի բարեկարգութեան համար, որոնք բարձրացնելն ուսումնարանը իր թշուա-րութիւններով:»

Արդէն սկսվում է 1879/80 ուսումնական տա-րին, բայց մինչև այժմ մեր ծխական դպրոցների մեծ մասի ուսուցիչներ ովքեր են լինելու, յայտնի չէ: Թեմական վերատեսուչները ինչպէս երևում է անկարող են յայտնվում գտնել ուսուցիչներ: Այդ մասին դանդաղաներ ստանում ենք գրովէ բոլոր գաւառական քարոզիչներից:

Լուում ենք որ մի հայ պարոն, որ դրամագուլու ունի, զիտուարութիւն ունի կազմել մի հայոց դե-բասանական մշտական խումբ, կամնում է վար-ձել Արծրունու թատրոնը և շարաթը երկու ան-գամ հայոց ներկայացուցիչներ տալ այդ թատրո-նում: Մի և նոյն ժամանակ պարոնը դիտուարու-թիւն ունի թատրոնի գները շատ է փան անել, օ-րինակ լուծանքը 5 ռուբլ, աթոռների վերջին կար-գերը 1 ռուբլից պակաս և այլն: Պարոնը հաւա-տացնում է որ արդէն նորուստ բեւելուտուար է կազմում:

ՇՈՒՇՈՒՑ մեզ հեռագրում են օգոստոսի 27-ից: «Այսօր առանձին շքեղութեամբ կատարվեցաւ հայոց մայր-եկեղեցում հանգուցեալ գեներալ Լ ա-զարե վի յիշատակին հոգեհանդիստ: Հանդիսին ներկայ էին թէ հայրը և թէ թուրքերը, նոյնպէս և տեղական վարչութեան ներկայացուցիչները:»

Մեզ հաղորդում են. «Մի վանքի վանահայր, որ նոր է ակնանկուած վարդապետական խաչ ստա-ցել, կտարել է վանքի գանձանակի արկը, վերցրե

է փողերը և վանքի քարտուղարի հետ անհետա-ցել է: Ոչ զքի յայտնի չէ վարդապետի բնակու-թեան տեղը:»

ՇՈՒՇՈՒՑ մեզ հաղորդում են, որ այնտեղի երիտասարդները մտադիր են նուիրատուութիւններ հաւաքել և հաւաքած գումարը գործածել հանգ. գեներալ Լազարեւի անունով մի օր և է բարե-գործական նպատակի համար: Թղթակիցը խոր-հուրդ է տալիս երիտասարդներին հաւաքած գու-մարը յանձնել «Արարատեան ընկերութեանը» այն պայմանով, որ ընկերութիւնը Հայաստանի մէջ մի նախալրթարան բաց անէ հանգուցեալ Լազարեւի անունով: Թղթակիցը կարծում է, որ նախալրթա-րանը կարելի է անուանել «Արարատեան—Լազա-րեան»:»

Մեզ հաղորդում են, որ օգոստոսի 30-ին գեղեր ժամանակ ԹԻՖԼԻՍԻ շրջակայքում երեք տեղ կայծակ է ընկել: Կայծակից մեռածները չը կան:

Մեզ գրում են ՇՈՒՇՈՒՑ, որ հայոց օրիորդա-կան դպրոցի աշակերտուհիները Ռուբինեան երկ-րադրածական դպրոցի համար հաւաքած գումարը մտադիր են նուիրել «Արարատեան ընկերութեանը»:

ԱՍԱԿԱՍԿԻՑ մեզ հաղորդում են, որ թե մական տեսուչ պ. Գեորգ Բարխուդարեանը մտա-դիր է տեղական ազգային դպրոցի անցեալ ու-սումնական տարւոյ բոլոր ուսուցիչներին հրա-ժարեցնել իրանց պաշտօնից:

ՇՈՒՇՈՒՑ մեզ հաղորդում են, որ օրերումս այնտեղ բացվել է հասարակաց կուրս, որ ունի իրան կից մի ընթերցարան: Ընթերցարանը ոչ մի հայոց լրագիր չէ ստանում, չը նայելով, որ անդամների մեծամասնութիւնը հայերն են կազմում: Կուրսում անդամները բոլոր ժամանակը թուղթ խաղալով են անցկացնում:

Մեզ հաղորդում են ԱՍԱԿԱՍԿԻՑ, որ տե-ղացի թատրոնատենները իրանց տուած հինգ ներ-կայացուցիչների արդիւնքից մտադիր են ընծայել 100 ռ. «Արարատեան ընկերութեան», 100 ռ. «Երկրեան ընկերութեան» և 100 ռ. հայ ազգաս ուսանողներին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍ

Նորերս Կ. Պօլսի թղթակիցները մի հե-ռագիր էին ուղարկել իրանց լրագիրներին, որի մէջ ասված էր, որ Վ.Օլո գաւառի Մակ-

րիկիցայի բնակիչները մի աղբէս են ներկա-յացրել Կ. Պօլսի օտար պետութիւնների դե-սպաններին, որի մէջ նրանք բողբոբում են թէ թիւրքաց պաշտօնատարները պահանջում են նրանցից վճարել վերջին տարւոյ այն հարկը, որը սուլթանը խոստացել էր նուիրել նրանց: Սուլթանն էլ խօ մարգարիական զգացմուն-քից դրդած չէ արել այդ գեղարկութիւնը. նա այդ արաւ պատերազմի ամենանեղ ճգ-նածամի միջոցին, այն ժամանակ երբ գէնքերը, թիւրքանութիւնները, վրանները և զանազան պա-տերազմական մթերքները երեսի վրա ընկած մնացել էին առանց տեղափոխելու. և այդ առարկաների տեղափոխութիւնը դիւրացնելու համար սուլթանը խոստացաւ բնակիչներին ազատել նրանց այն տարւոյ հարկից, եթէ միայն նրանք կօքնէին այդ իրեղենների տեղա-փոխութեան: Մակրիկիցայի բնակիչները մեծ ուշախառնութեամբ արին այդ գործը, որի հա-մար նրանք սուլթանի խոստման համեմատ զոնէ մասամբ վարձատրված էին համարում իրանց. բայց խոստանալ և չը կատարել, և հա այն պատուած հիմնաքարը, որի վրա հաս-տատված է թիւրքաց պետութիւնը: Թիւրքիան հետևում է իր աւանդական քաղաքականու-թեանը. նա այժմ պահանջում է այն հարկը, որից դեռ երեկ աղատեց ժողովրդին. նա ար-դարադատութիւնը մինչ այն աստիճանի է հասցնում, որ բանտարկում է այն խեղճերին, որոնք օրական պարէնին կարօտ, չեն կարողա-նում լրացնել իշխանութեան պահանջը:

Մեք չենք դարմանում թիւրքաց պետա-կան կազմվածքի այս հրեշտակ բարբարոսու-թեան վրա, — դա մեզ համար սովորական բան է դարձել — բայց մեք դարմանում ենք այն ամբողջ երկայն ամտութեան (մեր վարդապետները սրան երկայնամտութիւն են անուանում): Վրա, որ ստրկաբար տանում է այդ բռնակալական այլաբնակ շղթաները: Մակրի-կիցայի խեղճ բնակիչները խնդրում են օտար պետութիւնների ներկայացուցիչներին միջա-մտութիւնը, կամ ազատել նրանց այս տեսակ անտանելի բարբարոսութիւններից, և կամ զոնէ դիւրացնել նրանց զաղթականութեան գործը:

Այսպիսի տարորինակ հալածմաններինց յետոյ էլ դեռ էլի կան անրես մարդիկ, որոնք աշխատում են արդարացնել այդ հրե-շտար կառավարութիւնը, ինչպէս օրինակ թիւրքաց պետութեան Փարիզի աղէտը կա-մենում է հաստատացնել այդ քաղաքի լրագիր-

գործակատարութիւնից և իր համար առևտրական ազատ կոմիսիոնների պաշտօն կատարել:

Մասիսեանցին սկզբում վրդովեցրուց այս նամա-կը. առաջին անգամն էր, որ նրա գործակատարը, նրա ստորուկը, վստահանում էր նրա հետ այս աս-տիճան համարձակ լինել: Բայց ինչ կարող էր ա-նել: Գործը դժուար տեղ էր հասցրել: «Ես գիտէի, մեղանում էր նա, որ այն անիժ ա ծը կը լրացնէ նրան... Այս խօսքերով ակնարկում էր նա Ստե-փանին, մտածելով, թէ անկարելի էր, որ Ստե-փանը հանգուցեալ գործակատարի մասինց յետոյ յարաբերութիւն չը սկսէր Միքայելի հետ, նրանից փող պոկելու նպատակով: Բայց նրա վրդովմունքը մի փոքր մեղմացաւ, երբ աւելի լաւ մտածեց նա-մանի բովանդակութեան վրա: Մասիսեանը այն տեսակ մարդերից էր, երբ շահ կար աչքի առջև, նա միւս վրդաբորանքները շուտով մոռանում էր, Միքայելը յայտնում էր, որ իր կոմիսիոններութիւ-նից զոյացած արդիւնքի մի մասը կանցկացնէ ա-ղայի հայրի մէջ. ինչու զրկել իրան այդ օգտից: Բայց միւս կողմից, աղան մտածում էր, որ Միքա-յելը ինքն էլ կը շահվի, ինքն էլ փողը տէր կը զուռնայ.—այդ նրան հաճելի չէր կարող լինել, ու-րովհետև նա սիրում էր իր գործակատարներին միշտ աղքատ տեսնել, և աղքատութեան մէջ պտուում էր նրանց հնազանդութիւնը: Ինչպէս պէտք էր հայտնեցնել այդ երկու ծայրերը: Իրան զրկել օգտից, որ նա էլ զրկված լինի,—վճեց Մասիսեանը: Այդ անկարելի էր: Միքայելը յայտնում էր, եթէ աղան չը համաձայնվի իր պայմաններին հետ, ինքը ստիպված կը լինի հրաժարվել նրա գործակատարութիւնից և իր համար առանձին գործ սկսել: Բայց կորցնել Մի-

քայելի նման մի գործակատար, դժուար էր աղայի համար. ոչ չը կար, որ նրա տեղը բռնէր: Մա-սիսեանը յակամայից յայտնեց իր յօժարութիւնը, բայց մտքումը դրեց իր ժամանակին ուրիշ կերպով պատժել նրան...»

Որքան Միքայելի նամակը խիստ էր, այնքան աղայի նամակը մեղմ էր: Նա յայտնում էր իր հայրական ուրախութիւնը նրա յաւաճողիմու-թեան մասին, բարևաւորում էր աւելի ևս յաջո-ղակ և բաղաւոր լինել, թէ իր համար պարծանք էր համարում, որ Վր հասցրած աշակերտը վեր-ջապէս օմարդ է դառնում, և աւարտում էր նա-մակը, խորհուրդ տալով, որ Միքայելը աւելի լաւ կանէ, եթէ իր կոմիսիոններութիւնից զոյացած ար-դիւնքից այն մասն ևս, որ իրան է պատկանում, կը մտցնէ աղայի առևտրական գործի մէջ, և վեր-ջը տօկոսով միասին կը ստանայ իր օճիկի հետ, երբ աղան նրա համար մի առանձին առևտրական տուն կը բաց անէ:

—Դու ինձ այլ ես չես կարող խաբել, ասաց ժպտալով Միքայելը, երբ կարողացաւ աղայի նամակի վերջին տողը.—եւ քեզ սողէն ճանաչում եմ: Գ.

Միքայելի աշխատութիւնները այժմ աւելի ծան-րացան. նա բացի Մասիսեանի գործերից կատարում էր այժմ ուրիշ վաճառականները բազմաթիւ յանձ-նարարութիւններ. շարաթը երկու անգամ յաճա-խում էր առևտրական դպրոցը դասեր լսելու: առիթ էր գտնում այս և այն գործարանները տես-նելու և նրանց կազմակերպութեան հետ ժամօթա-նալու, իսկ տանը պարտաւոր էր ընթերցանու-թեամբ, և շատ փոքր ժամանակ ունէր հանգստա-նալու:—Այս բոլորը այնքան խորթ, այնքան օտա-

րուտ էին երևում տեղային հայ վաճառականնե-րին, որ Միքայելը վարմունքը ընդհանուր խօսակ-ցութեան և բանբանաբեր նիւթ էր դարձել նա-խանձոնների բերանում: Մի քանիցը առանձին նամակներով յայտնեցին աղային, թէ ինչ օմարու-թիւններն մէջ էր ընկել նրա գործակատարը: Բայց աղան ուշադրութիւն չը դարձրեց նրանց մատուցիչներին, երբ նոր տարւոյ սկզբում ներ-կայացրած ընդհանուր հաշիւի ցուցակի մէջ գտաւ մի խոշոր թրուանշան—5000 ռուբլի, որ Միքայելը բաժին էր հանել աղային իր կոմիսիոններական գործակատարութեան արդիւնքից: Նա ստանում էր աղայից օճիկի 1000 ռուբլի միայն, և նրա բոլոր գործերը կատարելուց յետոյ 5000 ռուբլի օգուտ էր տալիս. ինչու չը պիտի գոհ լինէր ա-ղան, երբ շատ էլ ցանկանար, դարձաւ չէր կա-րող ոչինչ ճշում գործ դնել Միքայելը վրա, որ այժմ մի կերպ անկախ դիրք էր հիմնել իր հա-մար:

Մօսկվայում կային ամեն կողմից հայ վաճա-ռականներ.— Հաշտարխանից, Նոր-Նախիվանից, Թիֆլիսից, Վարաբաղից, Երևանից, Ալաշիսից, և մինչև անգամ Թաւրիզից: Գրանց օրվայ ամեն մի ժամում կարելի էր գտնել բերթալե առջև, թէ և բերթան փակված լինէր, թէ և գործը այնտեղ դա-զարած լինէր: Որպէս մոլեռանդ բրահման հայ վաճառականը երբեք չէ հեռանում այդ առևտրա-կան տաճարից, և մի առանձին դուարութեան է զգում, նայելով նրա փակված դռների վրա: Բայց Միքայելը սովորութիւն չունէր յայտնվել այնտեղ կէսօրից յետոյ, երբ գործը զաղարած էր, և այդ շատ բարկացնում էր վաճառականներին, որ վե-րաբերում էին նրա հպարտութեանը: Բայց նա

առհասարակ խորշում էր այդ վայրախօս և դա-տարկապրտ հասարակութիւնից, որ մի ուրիշ զաղմունք չէր ճանաչում, որ իր հայկական նեղ շրջանից չէր դուրս գալիս, և հաւաքվելով այնտեղ, կամ զբաղված էին լինում կոշտ-կոպիտ կատակ-ներով, և կամ կեղտոտ բամբասանքներով էին պարագուծ: Հայ վաճառականը շնորք չունի, որ իր ժամանակը այնպէս կարգադրէ, որ գոր-ծի ժամանակը գործ կատարէ, հանգստու-թեան ժամանակը հանգստանայ, իսկ պարապ ժա-մանակը մի ուրիշ բան սովորէ: Բացի իր ծանօթ վաճառականութեանից, ոչ մի ուրիշ գործ չէ հե-տաքրքրում նրան. բացի իր հայկական նեղ շրջա-նից, նա մի օտար հասարակութիւն չէ ճանաչում: Եւ այդ է պատճառը, որ նա միշտ մնում է միակողմանի, անտաշ, անկիրթ, և ուր որ գնում է, դարձաւ վերադառնում է իր հայրենիքը նոյն ոգևոյ, նոյն սրտով և նոյն բնաւորութեամբ, որպէս դուրս էր եկել:

Մօսկվայում, որպէս ամեն տեղ, մի երկրի հայ վաճառականը սաստիկ ատերութիւն ունէր զէպի մի օտար երկրացին ընդհանրապէս, օրինակ, դա-րաբաղցին ասում էր զօկին, զօկը թիֆլիսեցուն և այլն: Իսկ մի և նոյն երկրի վաճառականը ա-տում էր իր երկրացուն մասնաւորապէս, օրինակ, մի հաշտարխանից միւս հաշտարխանցուն չէր կա-րող համբերել: Ամեն մէկը պատրաստ էր մեռաւ իր ընկերին, թէ և գիտեմար, որ օտարը 10 կօ-պէկ մնաւ տալով, ինքը 20 կօպէկ պիտի զլա-սկէր: Խօսքի անկեղծութիւն չը կար նրանց մէջ. բոլորը մէկ մէկու խաբում էին, թէ և բոլորն էլ ցոյց էին տալիս միմեանց սաստիկ մտերմութիւն: Գատարկ կեանքը, անգործութիւնը չին էր նրան-

ներին, որ յիշեալ հեռագրական տեղեկութիւնները բոլորովին սկալ ու անհիմն են... Այդ պաշտօնական փաստաբանը իր պերճախօսութեամբ թող ուժ աչքերին ուզում է թող փչէ, իսկ մենք, որ շատ մօտ ենք ճանաչում թիւրքաց կառավարութեանը, նա մեր աչքերը չէ կարող կապել:

Ննթադրեմք մինչև անգամ, որ այս լուրը սխալ է, իսկ սրա նման միւս հազարաւոր երեւոյթներ լուրերը:

Դա կատարեալ լրբութիւն է, այսպէս ոչ բարգրծութիւններին յետոյ էլ, դեռ էլի աշխատել արդարանալ տիեզերական կարծիքի առաջ:

ՖՐԱՆՍԻԱ

Ինչպէս արդէն յայտնի է մեր ընթերցողներին, Ֆրանսիական հասարակութիւնը բոլորովին է նահանգային ընդհանուր խորհրդարաններին աշխատանքի եզրակացութիւններով: Ֆրանսիական ներքին քաղաքականութիւնն այս րոպէին այնպիսի մի բազմակողմանի է, ինչպէս նա առհասարակ լինում էր մինչև այժմ:

Ով որ մինչև այժմ շատ թէ քիչ մօտիկ կարողացել է հետեւել Ֆրանսիական քաղաքականութեան, նա անշուշտ մեծ զանազանութիւն կը գտնի նրա անցեալ և ներկայ շարժման մէջ. այժմ Ֆրանսիական ներքին քաղաքականութիւնը, ոչ թէ միայն բազմակողմանի է, այլ և ընդհակառակը նա չափազանց միակողմանի է: Անշուշտ այս բոլոր պատճառը հանրապետութեան յաղթութիւնն էր. առաջ կառավարութեան մի որոշ ձև պէտք է հաստատվեր Ֆրանսիայում, և ամեն մի կառավարութիւն կամենում էր, որ իր ցանկացած ձևը հաստատվեր: Բնականաբար տեսնելով զանազանութիւնն և վերականգնել բնականաբար կայսերական արժիւր: Կղերականները կամենում էին հաստատել աստուած պետական կառավարութիւնը. սօցիալականները կամենում էին իրանց առաջարկել կոմունիստներին իրանց, Բուրբուներին իրանցը, մի խօսքով էլ ոչինչ վարչական ձև չը մնաց, որ չառաջարկվեց խեղճ Ֆրանսիային: Վիճաբանութիւններն այն աստիճանի հասան, որ քիչ էր մնացել թէ Բիսմարկն էլ իր կառավարութեան ձևն էր առաջարկում: Բայց հէնց որ երևան եկաւ մի տիրապետող կառավարութիւն, իսկոյն ամենքն էլ ցրվեցան և զուտները խոնարհած հպատակվեցան և ուսանա կարգադրող ողջունեցին նոր հանրապետութեանը. զժբարդապէս դա հազիւ կառուցուած մի ազատ շունչ քաշել եօթը ամբողջ հոգեվարք տարիների ճնշածամից յետոյ: Այժմ հանրապետութիւնը մի այնպիսի խոր արմատներ է գցել, որ նրա ջերմ պաշտպանները այլ ևս անհրաժեշտ չեն համարում թափառել նահանգից նահանգ և նրա հաստատութեան համար պրոպագանդներ տարածել, ինչպէս, որ նրանք անում էին զրեթէ ամեն տարի:

Միայն այժմ պ. Լուի-Բլան մտադիր է ձախարհորդել դէպի հարաւ, և մի քանի ձառներ խօսել, բայց այդ ձախարհորդութեան միջոցին արած ձառնապարհորդութեան միջոցին շնորհակալութեան ձև կունենան քան թէ պրոպագանդային: Նա կանցնի Լիճին, Ալիսիոնի, Նիւի, Մարտիլայի և Տուլոնի վայրով, և յետոյ կը վերադառնայ Վոսյէլիէյով: Այդ քաղաքներում նա մտադիր յօգուտ կատարեալ թորութեան ձառեր խօսել, բայց այդ դիտաւորութիւնը հազիւ թէ նրան յաջողի, որովհետև դրա այդ նպատակը զլուսարարական կալմած է Բորդօի ընտրութիւնից, այնպէս որ եթէ Բլանի ձայնի առաւելութիւն ստանայ, այն ժամանակ Լուի-Բլանին, համարձակ կարելի է ասել, որ կը յաջողի կատարեալ թորութեան նպատակը, բայց զժբարդապէս Բլանի ընտրութեան մասին մեծ յոյս չէ կարելի կապել, որովհետև ազգային երկու մեծ ժողովներն էլ հաստատ վճռել են, որ ինչպէս էլ լինի անցաւոր հանեւն այդ ինքն ըստ ինքեան արդարացի ընտրութիւնը. մենք արդարացի ենք անուանում այդ ընտրութիւնը, որովհետև այս գրեթէ երրորդ անգամն է, որ հասարակական կարծիքը սրբազործել է այդ նուիրական ընտրութիւնը:

Ազգային ժողովները, լրագրութիւնը թաղում են Բլանի շարքը, ժողովուրդը նրան յարուստ էլ է տալի:

Յաւալի է, որ հանրապետական Ֆրանսիան անտարբեր է մնում դէպի իր ամենատարբ սկզբունքը. նա կարծես չէ կամենում յարգել այն սուրբ օրէնքը, որի վրա նա այժմ հաստատված է. «Բարձրութեան ձայնը Աստուծոյ ձայնն է»:

Բայց և այնպէս պէտք է յուսալ որ հանրապետական Ֆրանսիան, այնու ամենայնիւ ուշադրութիւն չը դարձնելով վարչական գա

նազան պաշտօնական ձևերին, կարգադրայն է իր որդոյ յոյսը, և նրանք մի օր բազմ կունենան պատգամաւորների ամբիօնից լսել Բլանի խելօք ու կրակոտ ձառերը որոնք կը զրկեցնեն Լուի-Բլանի արժեքը և կը պաշտպանեն ազատութեան, հասարակութեան և եղբայրութեան անմահ գաղափարները:

Մենք փոքր ինչ համաձայն ենք մի դերմանացու այն խօսքերի հետ, որ նա ստաց թէ Ֆրանսիացիք այդ խօսքերը գրել են միայն իրանց պատերի վրա. բայց եթէ նրանք ընտրեն Բլանի խելի պէս արժանաւոր մարդիկ, այն ժամանակ մենք չենք կախածում, որ այդ խօսքերը դրոշմված կը լինեն և նրանց սըրտերում:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Գաղթից, 24 օգոստոսի

Անցեալ կիրակի օգոստոսի 12-ին, հանդէսով բացվեցաւ իրական սեռի դպրոցը, ինչպէս դեռ էք, մի ընկերութեան օժանդակութեամբ: Այդ ընկերութիւնը իրան Աւարպրեան է անուանում, որպէս և նրա խնամոց տակ եղած դպրոցը: Այդ օրվայ հանդէսը բաւականին համար էր, հանդիսակարգ գոհ էին և ուրախ տեսնելով օրորոյց դպրոցի իրականացէս բացումը, որովհետև մի քանի ամիս առաջ հակառակ կարծիք էին շանդէսը սկսվեցաւ եկեղեցական օրհնութիւններով, յետոյ խօսվեցան և կարգապահեցան զանազան ձառեր կրթութեան պէտքը բացատրելով, որոնց պատասխանում էին եռանդալին ծափահարութիւնները, դրանցից ետ բաժանելով առաջարկվեցան ընկերութեան և դպրոցի յաճողութեան ու բարօրութեան համար: Հանդէսը վերջացաւ նրանով, որ 20-ից աւելի աշակերտուհիք արդէն պատրաստ էին դպրոցում, որոնց բարեմաղթում ենք յառաջդիմութիւն:

Բացվեցաւ իրական սեռի դպրոցը, բայց ինչ եղաւ արականը—Արամեան դպրոցը—նա դեռ ևս ննջում է, նրա վրա էլ չեն մտածում անգամ, որովհետև բաւական հնացաւ և մենք էլ ընկել ենք մի ուրիշ դպրոցի ետեւից, էլ ով կը նայի նրան: Սրա վերաբերութեամբ միտքս է գալիս Հայաստանի մի հին առած:

Ինչ էս լաց լինում, թէ պզի չունի, լալուն մեր էն է, որ ազի չունի:

Արդէն «Մշակ» ընթերցողները գիտեն որ մեր վիճակի առաջնորդ Անդրէաս սրբազանը անցեալ տարի Վեհափառի հրամանով թողեց իր վիճակը և գնաց Էջմիածին: Նրանից ետ յաջորդ էր նշանակված երեսօտարդ Բարդուղիմէոս վարդապետը, որ սա էլ մի տարի իբրև յաջորդ մնացել էր, այս օրերուն թողեց և գնաց: Յայտնի է, որ Արամեան դպրոցը քանի տարի է հոգաբարձութիւն չունի, դրան կառավարում էին առաջնորդը և յաջորդը, այժմ Աստուծուն աղաչենք, որ ճշմարիտ և ժիւր մշակներ հասցնէ այս դպրոցը կառավարելու համար:

Արմենակ

Իբրև փաստ պատմում էին զանազան անկողնուներ:

—Մի անգամ սաստիկ կարկուտի ժամանակ, ատում էր մի զօկ, Վարաբաղում գիւղացիները հաւաքվում էին, ասելով, թէ մեր արտերին ինչ լինում է, թող լինի, գիտե՛ք, գոնէ տանուտէրի պարտը աղտանիք: Եւ ամեն մէկը վեր է աւանում իր տնից, որը մի փայտ, որը մի կապիտ, որը մի եօրդան, որը իր եսփուճիկ, վաղում են դէպի տանուտէրի արտը, և փուռում են նրա վրա. ցորենի հասկերը գիւղացիների ոտքի տակ ջարդվում են, տրոլվում են և գետնին հաւասար են դառնում: Այդ էջութիւն չէ, հարցնում է զօկը, դառնալով դէպի զարաբաղին:

—Բայց այն մտածե՛լ էք, պատասխանում է զարաբաղին, որ զօկը պանիրը դնում է բանկայի մէջ, զրօնից հաջը քսում է բանկային և ուտում, երեակայեղով, թէ պանիր է ուտում: Մի անգամ որդին գալիս է, տեսնում է դուքնի դուռը փակ է, հացը քսում է դուռն և այնպէս ուտում: Հայրը վրա է հանում, «Ինչ ես անումս, հարցնում է նա: —«Պանիր եմ ուտում, հայր», պատասխանում է որդին: —«Փշացած, չէ՛իր կարող համբերել, մինչև ես գալի, հիմայ բոլոր պանիրը կիրած կը լինես», ասում է հայրը և սկսում է որդուն ծեծել:

Յետոյ պատմում են այն առակը, թէ ինչպէս զարաբաղի գիւղացիները զրաւուրման ցանձել էին արտում, որ ոչխար բուսներ, և քանի օրից յետոյ գնացել, տեսել էին, որ մըլինները հաւաքվել են ցանկած դաւուրմայի վրա, և ուրախանալով ասել էին: —«Տիմայ որ պտտիկ են, այսքան են, երբ մեծանան, ոչխարի սուրունքը կունենանք»:

«ՄՇԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 օգոստոսի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ օգոստոսի 28-ին Սմօլենսկի նահանգապետը հեռազրոււ է Մոսկվա հետեւալը. Վեազմում այրվեցաւ բանար և երկու հարիւր տներ էլ գոհ են գնում հրդեհին. Սմօլենսկից ուղարկեցին հրդեհաշէջ զործիքներ և հրշէջ ընկերութեան զօրաբաժինը: «Полосѣ» լրագիրը հաղորդում է, որ մինիստր Վրէյդ օգոստոսի 27-ին Բոսով Գոնի վրա հասնելուց յետոյ, ուղևորվեցաւ Տաղանթօգ:

Կ. ՊՈԼԻՍ, 29 օգոստոսի (10 սեպտեմբերի): Ատում են, որ թիւրքաց կարինէտի Աարի-Ֆի-Սաֆվէտ փաշային մեծ վտանգ է սպառնում պաշտօնագրով լինելու: Բայրամի վերջանալուց յետոյ հաստատ սպասում են, որ մինիստրութիւնը կը փոխվի:

ՎԻԷՆԱ, 28 օգոստոսի (9 սեպտեմբերի): Աւստրիական զօրքերը երկու զօրաբաժիններով մտան Նօլթօբազարի անջալը. զօրաբաժիններից մէկը հասաւ Խան-Վալվաչա, ուր և բանակ դրեց, իսկ միւսը հասաւ Բանգլի առաջ գտնված տեղը:

ԼՕՆԻՍ, 30 օգոստոսի (11 սեպտեմբերի): Ատում են, որ աֆգանական ապստամբները կարել են Կարուլի և անգլիական բանակների յարաբերութիւնները: Ապստամբութիւնը առաջնային աւելի սաստկացել է: Ինչպէս լավում է, գեներալ Բօբերտի ձեռքի տակ գտնված ոյժը բաւական չէ ընդհելու ապստամբութիւնը:

Վ.Ս.Պ.Ս.Ս., 29 օգոստոսի: Հրդեհի ժամանակ այրվեցան երեք մարդիկ, փոստի կայարանը, զինուորական հիւանդանոցը և բանար: Բանտարկեալներն ուղարկված են Սմօլենսկ:

Գ.Ս.ՄՇԱ.Պ.Տ., 29 օգոստոսի: Գերմանական կայսրուհին այսօր այտուղից անցնելու ժամանակ այցելեց Լեզէն-Հայմում Ռուսաց Կայսրուհուն: Մոկիտեան բրիգադի բանակը շտապելով գնում է Կարուլ միանալու Բօբերտի զօրքերի հետ: Երկու շաբաթից յետոյ կը սկսվի ընդհանուր յարձակումը Կարուլի վրա:

ՎԻԷՆԱ, 30 օգոստոսի (11 սեպտեմբերի): Աւստրիական զօրքերի Պէֆլա մտնելու դիտաւորութիւնը իրագործվեցաւ:

Խմբագիր—հրատարակիչ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԻՈՒՆԻ

Նոյն միջոցին մի հաշտարխանցի մէջ է մտնում, կամենում է խօսել:

—Դու տուս կնոց, ասում են նրան, —հաշտարխանցին հէնց որ խօսեց, զաւմաղալ կը սարքէ. հաշտարխանցին միտ ապաշխանա՞ծ ծոցումը պարտաստ ունէ: Մի անգամ մի հաշտարխանցի գտնում է մի ծրար լիքը թղթաղբամով. «Ի՞նչ, ասում է, ես կարծում էի կռիւ թղթեր են»:

Նոր նախընտանցին կամենում է պաշտպանել հաշտարխանցուն:

—Կուր երկուքը մի հարազատ հօր որդիք էք, պատասխանում են նրան, այն զանազանութեամբ միայն, որ հաշտարխանցին խտակ ուսացել է, բայց նոր նախընտանցին դեռ ոչ ուսել է, և ոչ թափառ:

Մէջ է մտնում թիֆլիսցիներ:

Նրան ասում են, —վրացին խօ խելք չունի, բայց թիֆլիսցին մի հաւի խելք ունի: Մի թիֆլիսցի Կ. Պոլսում շատ էր ցանկանում կարմիր Լօրի ուտել և չէր գտնում. ընկերները նրան ծաղերի համար առնում են մի քիչ սպիտակ լօրի, ներկում են և տալիս են նրան. լօրին տաք ջրի մէջ իր ներկը կորցնում է և կրկին առաջին գոյնն է ստանում: Միւս օրը թիֆլիսցին գրում է իր կնոջը. «այստեղ կարմիր լօրին շատ վատն է, հէնց որ ջրի մէջ գցում ես, սպիտականում է»:

Այս տեսակ յիմար կատակներ էին մեր վաճառականների ամենօրեայ խօսակցութեան առարկան, երբ հաւաքվում են մի քիչ սպիտակ լօրի յետոյ, այս տեսակ դատարկախօսութիւններով նրանք մաշում էին իրանց ժամանակը: Մի մարդ, որ չէր երևում նրանց մէջ, դա էր Միքայէլը:

(Վը շարունակվի)

ցից մի տեսակ վայրահաններ, որ մինը միւսին կծկու սովորութիւն ունէր:

Տեսնում են, հայ վաճառականների հասարակութիւնը խմբված է բիրտայի առջև, ամեն տեսակ առիթներ և եւրօպական հազարամեքով: Նրանք բարձր ձայնով խօսում են, ծիծաղում են, հեհուում են, ամենին չը ներդիւղով, թէ իրանց վրա կարող էին ուշադրութեան դարձնել, թէ հրապարակի վրա այդ անկայելու էր: Նրանք պատմում են միմեանց զանազան տեսակ անեկզօաններ, կամ պատահած անցքեր, որ ցոյց են տալիս ամեն մի երկրացու յատկութիւնը:

—Գիտե՛ք, մի անգամ օժանդարդարիւն տօնին գնացել էինք եկեղեցի, պատմում է մի զօկ խորամանկ դէմքով և չի աչքերով. —Երբ ժամը վերջացաւ, դուրս եկանք եկեղեցու բակը, այնտեղ խմբով կանգնած, մտիկ էինք տալիս կնիկներին, մին էլ տեսնեմք, բոլոր զօկերը մօտեցան դարաբաղի պարսն Ն...ին, և նրա ձեռքը բռնելով, ասացին. «Նորահար տօնախմբութիւնում Վարաբաղցի զարմացած հարցուց. —«Ի՞նչ տօնախմբութիւն, պարսն իմ տօնը չէ»: —Ինչպէս չէ, ասաց մի զօկ, դու չես իմանում, որ այսօր Յիսուս Քրիստոս էլի վրա նստած, Երուսաղէմ մտաւ»:

Բոլորը ծիծաղում, հեհուում են զօկի յիմար արաստութեան վրա, որովհետև զարաբաղցու չէ մականուն էին տալիս, և Քրիստոս էլով էր Երուսաղէմ մտել, ուրեմն այն օրը պէտք է զարաբաղցու տօնախմբութիւնը լինէր:

—Սխալվում էք, ասում է մի վերաւորված զարաբաղցի, այդ անունը ի դուր են կայցել մեզ. հայերի մէջ ամենախելքը էլի զարաբաղցին է, թէ և նա զօկի սասանալութիւնը չունի. բայց սասա

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՍԱԼԻՑԵԼԵԱՆ ԱՏԱՄԻ ԲԺԺԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ ԱՏԱՄ-ՆԱԲՈՅԺ ԲԺԺԿ Լ. Ի. ԷԳԵԼԵՅԻՍԻ ԹՅՄ ԵՆ ՍՈՒՍԿՅԱԿ ԻՃԻՆԵՐԻ ԲԻՇՎԱԿԱՆ ՖԵԼԿՈՒՆՏԵՏԻՑ: ԵՂԻ միջոցները մեծ գուրծարողութիւն են գտել և առաջարկվում են իբրև ԱՄԵՆԱԼԱԻ առողջապահական ՄԻՋՈՑՆԵՐ բերանի և առամեքի համար: Կարելի է ԱՏԱՄՆԵՐԸ պահպանել ՓՕՇԻՆՆԵԼՈՒՅ՝ ստուգնում են ԼՕՐՁՈՒՆԻԻ ԲԵՐԸ և վատ ՀՈՏԻ առաջն են առնում:

Ետամարդի բժիշկ Ե. Ի. Էգելեյիսի ԳԼՍԵԼՈՐ ՊԵՆՏԵՍԸ գտնվում է ՄՕՍԿՎԱՅՈՒՄ, ԿՈՒՋՆԵՑԿԻ ԿԵՄՈՒՐՁ, ՍՕԿՈԼՕՎԻ տանը: ԹԻՖԼԻՍՈՒՄ կարելի է գտնել Ե. Մ. ՅՈՒՐԻՆՕՎԻ ԿՈՎԿԵՍԵՆ և անդրկովկասեան գլխաւոր ՊԵՆՏԵՍՈՒՄ: Ծախողների ՆԵՆՆԵԼՈՐ ԶԻՋՈՒՄՆ ԿԸ ԼԻՆԻ:

Նուսով կը մտնի մասնակի տակ մի գիրք, «Ձեռնարկ Գեղարտեստութեան» անունով որ կը լինի վեց դանդան մասերի բաժանված: Ցանկացողները խնդրում ենք բաժանորդ գրվել առաջուց, որպէս զի կարողանանք տպագրական ծախսերը հոգայ: Գրքի արժողութիւնն է 50 կ., կը վաճառվի Հայաստանում բացվող նոր ուսումնարանների օգտի համար: Ստորագրութիւնները ընդունվում են պ. Ձաքարայ Գրիգորեանցի գրասենտութեան, Միխայիլովի կամուրջի մօտ, և նախկին Եվանովի գրադարանում, Արծրունու գալլէրէյում: 2—3 Ա. հասն Բօտինեան

Խնդրում են վճարել Ն. Ի. ՄԵՐԵՐԻ ԹԵՄՍԻ Հայոց հոգևոր ուսումնարանների վարչութիւնին հարող ինքն ինքն առաջարկաբար ՈՒՍՈՒՑՅԻ ԿՈՐՏՈՒԹԻՒՆ ունեն, ուղարկելով մի և նոյն ժամանակ իրանց յանձնարած ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՇՏԱՏԸ: Թեմական վերատեսուչ ՎԵՐԵՐԻ ԲԱՐՏԻՎԱՐԱՆԵՑ: Գրքի արժողութիւնը 5—10 ՍՄՆԿԱՎԱՆ ՊԱՐՏԵՁ և Տարրական Աւսուցման արան

ԶԻՒԹԱՅԻՆ ՊԱՏԻՃՆԵՐ

ՆՕՐԱԿԻԵՅԻ ՄԵՔԸՆԾ ԶԻՒԹԻՑ, որ պատրաստված է Մօսկվայի դեղագործ:

ԳԻՐՇՖԵԼԴՏԻՑ

Գիւցի ֆրանսիական յայտնի պատիճների անհամեմատ թանգ գները դրոյեցին ինձ պարագել նրանց արդիւնագործութեամբ և որովհետև պատիճների պատրաստելը գաղտնիք է և նրանք իրանց մէջ ոչինչ չեն պարունակում, բացի մաքուր Զիւթից, եւ առաջարկում եմ իմ շատ լաւ պատրաստված պատիճները ՖԻՆՆԱԿԱՆ (ԳԻՒՅԵՒ) ՊԱՏԻՃՆԵՐԻՑ 40% էժան:

Յոյս ունեմ, որ ուսւ բժիշկները և հասարակութիւնը խելացի կերպով կը վերաբերվեն դէպի իմ աշխատանքը, որովհետև նորա առիթ չունեն ուսաց փողերով պահպանել ԱՐՏԱՍԵՆՆԵՆ ԱՐԴԻՆՆԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ:

Ծախելու տեղերը, Ռուսաստանի բոլոր դեղատոմսները և տեղական պահեստները: Գլխաւոր պահեստները. Մօսկվայում, Լուբեանսկի դեղատուն Եւ. Ի. Գիրշֆելդտի և Բ. Կեօլեր և ընկ. Նիկոլայի վրա: Թիֆլիսում Յուրինովի և Բուտովի դէատուն: 7 1—25

ՎՄԱՆԿԱՎԱՐԻՍՏԱՆ ԹԵՐԹ, ԱՄՍՍԳՐԻ ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆԻ ց

«Մանկավարժական Թերթը» իր երկրորդ տարուայ շրջանում հրատարակելու է նոյն ուղղութեամբ և ծրագրով, ինչպէս որ առաջին շրջանում հետեւեալ պայմաններով:

1. Տարեկան կը լինի 10 դրոյի, իւրաքանչեւը 6 թիւերից (96 էրես):
2. Տարեկան գինն է ամենայն տեղ 6 ռ.:
3. Մինչև սեպտեմբերի 10-ն բաժանորդագիրը վճարող բաժանորդը կը ստանայ ձրի յունիս ամսի վերջին մի ընտիր հեղինակութիւն հայերէն լեզուով թարգմանութեամբ կամ ինքնուրոյն ընթերցանութեան համար:
4. Եթէ բաժանորդաց թիւը հասնի մինչև 480-ի, այն ժամանակ խմբագրութիւն իւր բաժանորդներին ձրի տարւ է երկու գիրք:
5. Ուսուցիչները կարող են բաժանորդագիրը վճարել երկու նուազ առաջին երեք րուբլին յուլիսի սկզբին. միւս երեք րուբլին նոյեմբերի մինչև 6-ն: Վերջին նուազ բաժանորդները ուշանային «Թերթը» չեն ուղարկվի նոյեմբերի դրոյից սկսած մինչև դրանք ստանալը:
6. Որ և իցէ դրոյի չը ստանալու մասին բողոք հարկաւոր է ուղարկել ուղղակի խմբագրութեան հետեւեալ յեւր ստանալուն պէս: Բաժանորդ գրելի յանկացողները կարող են դիմել խմբագրութեան գրասենտակը, որ գտնվում է պ. Յ. Մարտիրոսեանի տպարանում, Սրբէյան փողոցի վերայ, Ալեքսանդրեան պարտէզի մօտ: Օտարաբարացիք կարող են դիմել հետեւեալ հասցեով. Вѣдомство Редакціи Армянскаго Журнала „Педагогическіи Листокъ“.

Խմբագիր ՅԱՎՈՐ ՏԵՐ-ՅՈՎԱՆՆԻՍԵԱՆ:

Մանկական Պարտէզում ընդունվում են երկու տեւի մանուկներ 4-ից մինչև 7 տարեկան հասակը, իսկ ուսումնարանում ընդունվում են 7-ից մինչև 14 տարեկան հասակը: Ուսման ընթացքը այնպէս է յարմարեցրած, որ Աւսումնարանում թէ աղջիկ և թէ տղայ աւարտողները կարող են գիմնազիաների 1 և 2-րորդ դասատունները մտնել: Սոյլակի, Վելիամիտովկայա փողոց, Իշխ. Ամատունու տուն, № 11. 2—4

Մարիամեան Երկուսի Երկուսի օրիորդաց ուսուցման արանում ուսումը սկսվում է սեպտեմբերի 3-ին, աշակերտուհի ընդունելը արդէն սկսված է օգոստոսի 20-ից: Այս տարի բացվում է երրորդ դասատուն, որով ընդ ամենը կը լինեն երեք դասատուն և չորս սպորտասական դասատուն: 2—3

Թիֆլիսի արհեստագործների կուբի գլխաւոր անդամների խորհուրդը Սան-Սուսի այգիում ԴԻՄԱԿԱՆՆԻՍՆԵՆ նշանակել շաբաթ սեպտեմբերի 1-ին: Հիւրեր կը ընդունվում են նախկին պայմաններով: Տղաների վճարում են մուսթի համար 2 րուբլ, կանայք 1 ր.: Ոչ ըբի թոյլ չէ արվում հանել դիմելը ամբողջ երկրորդ ժամանակ: Սկզբն է 8 ժամին, վերջը 2 1/2 ժ.: 2—2

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1		Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Յ Ց		ԹԻՖԼԻՍ 1879	
Թիֆլիսի վաճառական (Օգոստոսի 31-ին)	7 98	Փոփ-թիֆլիսեան ԵՐԿԱՌՈՒՂԻ	ՓՕՍ	ԲԺՇԿԱՆՑ	ՎՄՍԿԻ ՊԱՏԱՄՆԵՆՆԵՐ
Ոսկին (պոլիսիսկրիպը)	1480	Թիֆլիսից մինչև Փոփի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամ մին 21 րոպէ առաւօտեան: Մինչև Միխայիլով (խուսն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ:	Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագրներ և թէ ծանր փօստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7: Իսկ կիրակի օրը չհասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան:	Հիւանդների ընդունելութիւնը առաւօտեան 8-ից մինչև 10 ժամը:	— ԵՐԵՎԱՆ. Աթանասեանց, Ինչ էք կարծում, որ միայն ձեր ազգանունն է Մթ. տաներով սկսվում: «Մշակ» № 138-ի պատասխանը ձեզ չէր սուած: Մեզ էլ յայտնի է, որ կարմրաթուշ օրիորդները կարմիր այտերով ոգևորվել ձեզ անմասնել է:
Վերջին 5% առաջի փոխաւթեան տոմ. 100	238	Միխայիլով (խուսն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ:	Ռուսաստանից և Արտասահմանից փօստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր: Բացում է արակտից երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոփ-թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր: Նույնու արակտից չորեքշաբթի և կիրակի: Բելիլիւնի արակտից երեքշաբթի և շաբաթ:	Երկուշաբթի. Վերմիլի ներքին և Բաբայի ներքին և հոգեկան և:	— ԱԹԱԼՔԱՒԱՔ. Ականատեա, Ձեր նամակից լուրեր կը բաղնիք:
Ներկորդ 5% վերջինի	237	Սեպտեմբերի 1-ին	Փոփից . . . 9.13	Երկուշաբթի. Վերմիլի ներքին և Բաբայի ներքին և հոգեկան և:	— ԹԻՖԼԻՍ. Զ. Խ. Զ. Բ. Ս. Հ. Մ. Ա. Ձեր նամակը չեք սպի: Նթէ դուք կամեաւ էք օգոստոսի 13-ի ներկայացումից մնացած 100 րուբլ նուրիւր Վարարատեան ընկ., թե՛րէք այդ գումարը և մենք տեղ կը հասցնենք: Մենք ու ժով ձեր ընկերներից չեք կարող առնել 100 րուբլ:
Մարտիկ կուրսը 269	100	Սեպտեմբերի 2-ին	Միխայիլով . . . 5.39	Չորեքշաբթի. Վերմիլի ներքին և Բաբայի ներքին և հոգեկան և:	
Վճարողի կուրսը Օրդայի վրա	9 40	Սեպտեմբերի 3-ին	Գօրի . . . 7.5	Ուրբաթ. Վերմիլի ներքին և Բաբայի ներքին և հոգեկան և:	
Վճարողի կուրսը արժէ 121 դր.	100	Սեպտեմբերի 4-ին	Թիֆլիս . . . 9.31	Շաբաթ. Վերմիլի ներքին և Բաբայի ներքին և հոգեկան և:	
Վճարողի կուրսը արժէ 121 դր.	4 80	Սեպտեմբերի 5-ին	Միխայիլով . . . 5.39		
Սեպտեմբերի ամսի ակցիան 200 մ.	310	Սեպտեմբերի 6-ին	Գօրի . . . 7.5		
Փոփի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	—	Սեպտեմբերի 7-ին	Թիֆլիս . . . 9.31		
Շաբաթը բրոջիւ	7 50	Սեպտեմբերի 8-ին	Միխայիլով . . . 5.39		
Վրա տեսակը . . .	6 95	Սեպտեմբերի 9-ին	Գօրի . . . 7.5		
Չարք աւազը . . .	5 60	Սեպտեմբերի 10-ին	Թիֆլիս . . . 9.31		
Սրանցիկ . . .	5 10	Սեպտեմբերի 11-ին	Միխայիլով . . . 5.39		
Մարդ վճառած . . .	10	Սեպտեմբերի 12-ին	Գօրի . . . 7.5		
Բամբակը Երևանու Ա. մերկայի սերմից . . .	8	Սեպտեմբերի 13-ին	Թիֆլիս . . . 9.31		
Միւս տեսակը հին սերմից . . .	7 40	Սեպտեմբերի 14-ին	Միխայիլով . . . 5.39		
Բարդը թուշի . . .	7 50	Սեպտեմբերի 15-ին	Գօրի . . . 7.5		
Թարաքամի . . .	4	Սեպտեմբերի 16-ին	Թիֆլիս . . . 9.31		
Ալիւրը Շորագարու . . .	2 20	Սեպտեմբերի 17-ին	Միխայիլով . . . 5.39		
Նրանի . . .	—	Սեպտեմբերի 18-ին	Գօրի . . . 7.5		
Գարին . . .	1 40	Սեպտեմբերի 19-ին	Թիֆլիս . . . 9.31		
Մոմը ընամարայի (стеар.) . . .	12 40	Սեպտեմբերի 20-ին	Միխայիլով . . . 5.39		
Մեաքսը Նուրիայի . . .	180	Սեպտեմբերի 21-ին	Գօրի . . . 7.5		
Կասեթ ունը . . .	100	Սեպտեմբերի 22-ին	Թիֆլիս . . . 9.31		
Կոկոնը Նուրիայի (բոմ.) . . .	50	Սեպտեմբերի 23-ին	Միխայիլով . . . 5.39		
Ֆրիգոնը (լասը) Ագուլեան . . .	60	Սեպտեմբերի 24-ին	Գօրի . . . 7.5		
Կօֆէն մոկոփ . . .	26	Սեպտեմբերի 25-ին	Թիֆլիս . . . 9.31		
Վրա . . .	22	Սեպտեմբերի 26-ին	Միխայիլով . . . 5.39		
Մանանյուս . . .	18	Սեպտեմբերի 27-ին	Գօրի . . . 7.5		